

**ՆԱԿԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳՐՈՒԹՅԱՆ**  
**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՆԱՎԱԶԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՆԱՎԱԶԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հունիսի 2011թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման եւ գործունեության կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 2011 թվականի մայիսի 19-ին մուրքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՄ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով Նամաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Նավաքական անվրանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվրանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման եւ գործունեության կարգի մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Նամաձայնագիր) Նայասրանի Նանրապետության կողմից ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին:

2. Նամաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո կդադարի 2001 թվականի մայիսի 25-ին ստորագրված՝ «1992 թվականի մայիսի 15-ի՝ Նավաքական անվրանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների հավաքական անվրանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման եւ գործառության կարգի մասին» արձանագրության գործողությունը (Նայասրանի Նանրապետության կողմից վավերացվել է 2002 թվականի ապրիլի 3-ին՝ Ազգային ժողովի Ն-272-2 որոշմամբ):

3. Նամաձայնագրի նպատակն է՝ Նավաքական անվրանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների (այսուհետ՝ ՆԱՊԿ) հավաքական անվրանգության համակարգի անհրաժեշտ ուժերի եւ միջոցների կազմավորման եւ կատարելագործման միջոցով ՆԱՊԿ մասնակից պետությունների նկատմամբ զինված հարձակմանը (ագրեսիային) եւ այլ մարտահրավերներին ու սպառնալիքներին (միջազգային ահաբեկչություն, անդրազգային հանցավորություն, արտակարգ իրավիճակներ) համարժեք արձագանքման ապահովումը:

4. Նամաձայնագրով ՆԱՊԿ հավաքական անվրանգության համակարգի կազմավորման եւ գործառության հիմնական սկզբունքներն են համարվում՝ հավաքական անվրանգության համակարգի պաշտպանական բնույթը, բոլոր Կողմերի համար հավաքական անվրանգության եւ անվրանգության հավասար մակարդակի անբաժանելիությունը, Կողմերի հավասար պարասխանավորությունը հավաքական անվրանգության ապահովման համար, ինքնապաշտպանության հավաքականությունը, որը նախատեսում է Կողմերի մասնակցությունը կոալիցիոն եւ/կամ

փարաձաշրջանային հիմքի վրա զինված հարձակման (ագրեսիայի) խափանմանը, փարաձքային ամբողջականության պահպանումը, հարգանքն ինքնիշխանության եւ ազգային շահերի նկատմամբ, միմյանց ներքին գործերին չմիջամտելը, Կողմերի միջեւ վեճերի լուծման համար հավաքական անվտանգության համակարգի ուժերն ու միջոցներն օգտագործելու անթույլարելիությունը, կոալիցիոն եւ փարաձաշրջանային հիմքի վրա հավաքական անվտանգության համակարգի կազմավորումը եւ զարգացումը:

**5.** Նամաձայնագրով ՆԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի ուժերը եւ միջոցները նախատեսված են մասնակցելու՝ ՆԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների նկատմամբ սպառնալիքի կանխմանը եւ զինված հարձակման (ագրեսիայի) խափանմանը, զինված գործողությունների եւ ընդհարումների փեղայնացմանը, Նամաձայնագրի մասնակից պետությունների անվտանգության դեմ մարտահրավերների եւ սպառնալիքների հակազդման միջոցառումներին՝ ներառյալ միջազգային ահաբեկչության, թմրանյութերի, զենքի ու զինամթերքի անօրինական շրջանառության, անդրազգային կազմակերպված հանցագործության այլ տեսակների դեմ պայքարին, ռազմական գործողությունների անցկացման դեպքում բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների կատարմանը, արտակարգ իրավիճակների չեզոքացմանը եւ մարդասիրական օգնության ցուցաբերմանը, նրանց պետական սահմանների, պետական եւ ռազմական օբյեկտների պաշտպանության ուժեղացմանը, խաղաղապահ գործողություններին եւ ՆԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի սահմանած այլ խնդիրներ լուծելու համար:

**6.** ՆԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմի մեջ են մտնում՝ կառավարման ազգային մարմիններին ենթակա եւ ՆԱՊԿ մարմինների որոշումով օգտագործվող՝ Նամաձայնագրի մասնակից պետությունների ազգային զինված ուժերի եւ այլ զորքերի միավորումներ, կազմավորումներ, զորամասեր եւ ստորաբաժանումներ, զորքերի (ուժերի) կոալիցիոն խմբավորումներ, զորքերի (ուժերի) փարաձաշրջանային (միավորված) խմբավորումներ, միավորված (համափեղ) զինվորական համակարգերի խմբավորումներ, հավաքական խաղաղապահ ուժեր: Իսկ Ռուսաստանի Դաշնության միջուկային ռազմավարական ուժերը կատարելու են ՆԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների նկատմամբ զինված հարձակում (ագրեսիա) իրականացնելու հնարավոր փորձերի զսպման գործառույթ:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ՆԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների նկատմամբ զինված հարձակումը (ագրեսիան) եւ այլ մարտահրավերներն ու սպառնալիքները դիտում է որպես Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված հարձակում (ագրեսիա), այլ մարտահրավերներ ու սպառնալիքներ եւ ձեռնարկում համապատասխան համարժեք միջոցներ՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության փրամադրության փակ գրնվող բոլոր ուժերն ու միջոցները,

- Հայաստանի Հանրապետությունը բոլոր պետությունների եւ պետությունների միությունների հետ իր հարաբերությունները կառուցում է միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների եւ նորմերի հիման վրա, աջակցում է ռազմական բնագավառում վստահության միջոցների ընդլայնմանը, հետետղական քաղաքականություն է վարում՝ ուղղված պատերազմների եւ զինված ընդհարումների կանխմանը,

- փարաձաշրջանային եւ գլոբալ մակարդակներով հավաքական անվտանգության ապահովման շրջանակներում ռազմական սպառնալիքների կանխման, փեդայնացման եւ չեզոքացման համար նախապատվություն է փալիս քաղաքական-դիվանագիտական եւ ոչ թե ռազմական միջոցներին, ինչպես նաեւ մասնակցում հավաքական անվտանգության համակարգի ուժերի ու միջոցների կազմավորմանը,

- խաղաղապահ գործողություններին մասնակցելու համար ՆԱՊԿ մասնակից պետությունների հետ ստեղծում է ՆԱՊԿ հավաքական խաղաղապահ ուժեր, որոնց գործառնությունը կանոնակարգվում է համապատասխան համաձայնագրով,

- ՆԱՊԿ մասնակից պետությունները՝ որպես գորքերի (ուժերի) փարաձաշրջանային խմբավորումներ դիտում են՝ ա) հավաքական անվտանգության արեւելաեվրոպական փարաձաշրջանի գորքերի փարաձաշրջանային խմբավորումը, որը կազմավորվելու է Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միութենական պետությունների շրջանակներում, բ) հավաքական անվտանգության կովկասյան փարաձաշրջանի գորքերի (ուժերի) միավորված խմբավորումը, որը կազմավորվելու է Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ երկկողմ համաձայնագրերի հիման վրա, գ) կենտրոնասիական փարաձաշրջանի գորքերի (ուժերի) խմբավորումը, որը կազմավորվելու է ՆԱՊԿ մասնակից պետությունների միջեւ երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա եւ դ) ՆԱՊԿ մասնակից պետությունների հետ համափեղ օգտագործման համար

միավորված (համափոխ) գինվորական համակարգերի խմբավորումները, որոնք կազմավորվելու են գործառնական նշանակությամբ միասարք (հակաօդային պաշտպանության, հեղափոխության, կապի, ուժերի (միջոցների) ավտոմատացված կառավարման, հրթիռային հարձակման մասին նախագաղափարային, քիմիական, ճաշագայթային եւ կենսաբանական իրավիճակի, փիեզերական փարածության վերահսկման եւ այլն) ազգային ուժերի եւ միջոցների մասերի միավորման ճանապարհով,

- որպես Նավաքական անվտանգության համապատասխան փարածաշրջանի մեջ մտնող պետություն՝ Նայասրանի Նանրապետությունը սահմանում է գործերի (ուժերի) փարածաշրջանային (միավորված) խմբավորման եւ միավորված (համափոխ) գինվորական համակարգերի կազմը, ինչպես նաեւ այդ կազմում առանձնացված միավորումների, կազմավորումների եւ գործառնական անվանացանկը,

- ինքնուրույն իրականացնում է Նայասրանի Նանրապետության գինվորական համակարգերի եւ հարուկ նշանակության ուժերի կազմավորումների փոխնիկական ու թիկունքային ապահովումը, սրբեղծում է նյութական միջոցների պաշարներ, սահմանված կարգին համապատասխան համալրում է դրանք մինչեւ համաձայնեցված նորմերը:

**8.** Ըստ Նամաձայնագրի՝ Նավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմի, ծավալման եւ կիրառման ժամկետների մասին որոշումն ընդունում է ՆԱՊԿ հավաքական անվտանգության խորհուրդը՝ ՆԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների դիմումի հիման վրա:

**9.** Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետության սրանձնած պարտավորությունները համահունչ են ՆՆ Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին, կոչված են, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, իրականացնելու բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններ:

**10.** Նամաձայնագրի դրույթների համակարգային վերլուծությունից հետեւում է, որ Նայասրանի Նանրապետության սրանձնած պարտավորությունները, համաձայն ՆՆ Սահմանադրության 8.2-րդ հոդվածի, կոչված են սրբեղծելու Նայասրանի Նանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը, փարածքային ամբողջականությունը եւ նրա սահմանների անձեռնմխելիությունը ապահովող լրացուցիչ երաշխիքներ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ

հողվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման եւ գործունեության կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

9 հունիսի 2011 թվականի  
ՍԴՈ-971